



ALBERTO M. CARVALHO  
Վերականգնող

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՄԻԱՅՅԱԼ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆ  
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Ոստիկանապետի գրասենյակ  
125 North Beaudry Avenue, Los Angeles, California 90012  
Հեռախոս՝ (213) 202-4508 – Ֆաքս՝ (213) 202-8676



STEVEN K. ZIPPERMAN  
Ժամանակավոր ոստիկանության պետ

**ԹԵՄԱ՝ ԾՆՈՂԻ/ՕՐԻՆԱԿԱՆ ԽՆԱՍԱԿԱԼԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ՝ ՀՐԱԶԵՆ ԱՆՎՏԱՆԳ ՊԱՀԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Հարգելի՛ ծնող/խնամակալ՝

Մեր աշակերտների և անձնակազմի համար անվտանգ կրթական միջավայրի ապահովումը մնում է մեր առաջնահերթություններից մեկը: Բոլորս տեղյակ ենք մեր հարևան համայնքներում և ամբողջ երկրի տարածքում զենքի բռնության դեպքերի մասին: Կալիֆորնիայում ամեն տարի 18 տարեկանից ցածր միջին հաշվով 27 երեխաներ ինքնասպանություն են գործում հրազենով, որը պատկանել է տանը գտնվող ինչ-որ մեկին: Հրազենային միջադեպերից մեծ մասի դեպքում անչափահասն օրինական զենք զենքը գտել է իրենց բնակավայրից կամ հարազատի բնակավայրից: Լոս Անջելեսի միացյալ շրջանը քայլեր է ձեռնարկում՝ ապահովելու համար, որ դպրոցական կամպուսներն ապահով լինեն զենքի բռնության սպառնալիքից: Որևէ աշակերտի մոտ հրազեն հայտնաբերելու դեպքում նա անմիջապես կենթարկվի ձերբակալման, ժամանակավոր հեռացման տակ կորվի և կառաջարկվի նրան վտարել դպրոցից: Աշակերտներին հրազենից պաշտպանելու մեր ջանքերին նպաստելու համար և որպես հարգանք մեր ընտանիքների հանդեպ՝ Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում զենքն անփույթ պահելուց անչափահասներին պաշտպանելու իրավական պարտավորությունները: Ստորև ներկայացված են զենքը պահելու մասին օրենքներից երկուսը:

**[ՁԵՆՔԻ ՀՐԱԶԵՆ ԱՆՎՏԱՆԳ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ, ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 55.21 ԲԱԺԻՆ](#)**

Ձեռքի հրազենն ապահով պահելու մասին օրենք, Լոս Անջելեսի քաղաքային օրենսգրքի 55.21 բաժին Լոս Անջելես քաղաքի այս օրենքը հանցագործություն է համարում բնակավայրում հրազեն ունենալը, եթե այն փակի տակ պահված չէ, կամ, եթե Կալիֆորնիայի Արդարադատության դեպարտամենտի կողմից հաստատված ձգանի կողպեքը վնասված է:

**[ՀՐԱԶԵՆԻ ՀԱՆՑԱՎՈՐ ՊԱՀՈՒՄ, Կալիֆորնիայի քրեական օրենսգրքի բաժին 25100\(A\)](#)**

Այս օրենքը քրեականացնում է լիցքավորված զենքը Ձեր կողմից վերահսկվող ցանկացած տարածքում պահելը՝ իմանալով կամ ողջամտորեն պարտավոր լինելով իմանալ, որ երեխան, ամենայն հավանականությամբ, կարող է գտնել այն, և երեխային հասանելի է դառնում զենքը՝ մահվան կամ լուրջ մարմնական վնասվածքի պատճառ դառնալով:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կարդալ վերոնշյալ օրենքների ամբողջական տեքստը:

Հարգանքով ձեր,

Steven K. Zipperman  
Ժամանակավոր ոստիկանության պետ

----- ԿՏՐԵՔ ԱՅՍՏԵՂ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՐՈՒՄ ԶԵՐ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻՆ -----



**ՀՐԱԶԵՆԻ ԱՆՎՏԱՆԳ ՊԱՀՈՒՄ – ՀԱՍՏԱՏՄԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹ 2022-2023**

Խնդրում ենք ստորագրել ստորև՝ հաստատելով այս տեղեկատվության ստացումը:

Աշակերտի անունը (տպագիր) \_\_\_\_\_

Ծնողի/օրինական խնամակալի անունը (տպագիր) \_\_\_\_\_

Ծնողի/օրինական խնամակալի ստորագրությունը \_\_\_\_\_ Ամսաթիվ՝ \_\_\_\_\_